

նաև՝ Պարտիզակի Ամերիկեան բարձրագոյն վարժ.ի (1896-1915): 1915 ին կը տարագրուի ընտանեօք եւ կ'ապաստանի Քիւրիս, ուր կ'ապրի տառապանքի կեանք մը (1916-18). Զինագագարին կուգայ Հալէպ եւ 1919ին ուսուցիչ կը կարգուի տեղւոյն Անկլո-Հայկական նորահաստատ վարժ.ին: Հ. Բ. Բ. Միութեան հրաւէրով եւ Երուսաղէմի ճամբով կ'ուղևորի Գահիրէ եւ Գալստեան վարժ.ին տեսչութիւնը կը վարէ (1919-22). կրթական վարիչ Բարեգործականի Երուսաղէմի երկու որբանոցներուն (1922-23). ուսուցիչ Ս. Յակոբի վանքին ժառ. վարժ.ի 1924 էն սկսեալ, կը դասախօսէ հայերէն. չափական գիտութիւն. ֆրանսերէն եւ տոմարակալութիւն.

Մխալեան ուսուցչական պաշտօնէ զատ, վարած է նաև վարչական պաշտօններ Պարտիզակի եւ Նիկոմիդիոյ մէջ: Պրուսայի շերամաբուծական պետական վարժ.էն ստացած է Ա. աստիճանի վկայական: Հրատարակած է Ժողովուրդի գաւակի մը յիշատակները անուն զորքը, Ա. հատոր, (տպ. Պոսթոն, 1924):

Ե

ԵՂԻԱ ՏՆՏԵՍԵԱՆ, ՊՈՂՍԵՑԻ. — Ծ. 1834 ին. աշկ. Միջագիւղի Ազգ. վարժ.ին, երաժշտութեան սկզբունքը կը սորվի Գրիգոր վարժապետէն (յետոյ Պօղոս քչ.). 1848 ին Արապեան տպարանին մէջ գրաշար կ'ըլլայ եւ կը շարունակէ Կ. Միւհէն-տիսեանի մօտ. 1862 ին Անճնուէր ընկերութեան կողմէն ուսուցիչ կը զրկուի Հաճըն 1862-64. իբր երաժշտապետ կը հրաւիրուի Ս. Յակոբի վանքը, ուր կը մնայ մէկ տարի եւ կը դառնայ Պուրիս. նոյն պաշտօնով կրկին կը հրաւիրուի Ս. Յակոբի վանքը եւ կ'ստանձնէ նաև տպարանի տեսչութիւնը: Քիչ ժամանակէն Պոլիս վերագաւնալով՝ 1872 ին կուռնեայ իր սեպհական տպարանը:

Իր երաժշտական երկասիրութիւններն են.

— Բոլխանդակութիւն լուսագց հայ Ս. Եկեղեցոյ (տպ. Երուսաղէմ, 1864).

— Ազգ. երաժշտութիւն (Սիօն, 1867, Յունիս-Սեպտ. ուր նըշանակուած են խաղերու հայկական անունները Ս. Յակոբի վանքին ձեռագիրներէն քաղուած: